ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<<----->> փետրվարի 2012թ. N—— -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ <<ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N1840-Ա որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող <<KLQ 6770G>> մոդելի 249 հատ քաղաքային ավտոբուսները և դրանց պահեստամասերը (այսուհետ՝ Գույք)՝ Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպելու պայմանով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված Գույքը 4532815.3 հազ. դրամ ընդհանուր արժեքով ներդնել <<Երևանի ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում, որի դիմաց վճարումը կկատարվի ընկերության կողմից համապատասխան քանակությամբ բաժնետոմսերի թողարկման և Երևան համայնքի օգտին տեղաբաշխման եղանակով:

3. <<Երևանի ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ 453281 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ավելացնել 4.532.810.000 դրամով՝ այն սահմանելով 4.597.810.000 (չորս միլիարդ հինգ հարյուր իննսունյոթ միլիոն ութ հարյուր տասը հազար) դրամ, որից հետո հասարակ (սովորական) բաժնետոմսերի ընդհանուր թիվը կդառնա 459781 հատ, յուրաքանչյուրը՝ 10000 դրամ անվանական արժեքով:

4. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել նվիրաբերության պայմանագրի կնքումը և Երևան քաղաքի ավագանու հաստատմանը ներկայացնել <<Երևանի ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ <<ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև 2011 թվականի օգոստոսի 27-ին և նոյեմբերի 10-ին ստորագրված պայմանագրերի շրջանակներում քաղաքային ավտոբուսները և դրանց պահեստամասերը նվիրաբերելու մասին>> N1840-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն Երևան համայնքին է նվիրաբերվում Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող <<KLQ 6770G>> մոդելի 249 հատ քաղաքային ավտոբուսները և դրանց պահեստամասերը՝ Երևանի քաղաքային համայնքի ենթակայության կազմակերպության կողմից Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպելու պայմանով։

Հիմք ընդունելով Որոշման պահանջները՝ վերոհիշյալ ավտոբուսները և պահեստամասերը նպատակահարմար է ընդունել որպես Երևան համայնքի սեփականություն և քաղաքային տրանսպորտի աշխատանքը կազմակերպելու նպատակով շահագործման հանձնել <<Երևանի ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերությանը՝ ավելացնելով կանոնադրական կապիտալը ավտոբուսների և պահեստամասերի արժեքի չափով՝ 4532815.3 հազ. դրամով։

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ <<ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<<Գույք ընդունելու և <<Երևանի ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ <<ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Գույք ընդունելու և <<Երևանի ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ